Ընդունվել է
Համալսարանական խորհրդի
թիվ 1 (2026-27) նիստում
2026 թ. սեպտեմբերի 11-ին

Adopted by University Council
session #1 (2026-27) on 11 September 2026

Հաստատում եմ՝
Տնօրեն
_____ Ա. Լ. Հարությունյան
11 սեպտեմբերի 2026 թ.

Approved by Director A. L. Harutyunyan
11 September 2026

ԵՐԵՎԱՆԻ «ՀԱՅԲՈՒՍԱԿ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ● YEREVAN HAYBUSAK UNIVERSITY

Արհեստական բանականության կիրառման ուղեցույց ● Guidance on Using Artificial Intelligence

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն ուղեցույցը սահմանում է Երևանի «Հայբուսակ» համալսարանում (ԵՀՀ) արհեստական բանականության (ԱԲ) գործիքների կիրառման սկզբունքները և պահանջները ուսումնական, հետազոտական և վարչական գործունեության մեջ: Այն վերաբերում է ԵՀՀ-ի ուսանողներին, դասավանդողներին, հետազոտողներին և աշխատակիցներին:

1.2. ԱԲ գործիքներ են այն ծրագրային համակարգերը, հարթակները և ծառայությունները, որոնք ԱԲ տեխնոլոգիաների միջոցով իրականացնում են տեղեկատվության որոնում և մշակում, վերլուծություն, բովանդակության ստեղծում կամ վերափոխում, թարգմանություն, ծրագրավորում և այլ մտավոր գործընթացների աջակցություն:

1.3. ԵՀՀ-ը ճանաչում է ԱԲ գործիքների կրթական, գիտահետազոտական և վարչական ներուժը և խրախուսում դրանց պատասխանատու, թափանցիկ և ակադեմիական բարեվարքությանը համապատասխան կիրառումը:

1.4. ԱԲ գործիքների կիրառումը չպետք է փոխարինի ուսանողի, դասավանդողի կամ հետազոտողի սեփական գիտական դատողությանը, ստեղծագործական աշխատանքին, պատասխանատվությանը և ինքնուրույնությանը:

1.5. ԱԲ կիրառման դեպքում աշխատանքի վերջնական բովանդակության, ճշտության, պատշաճության և ակադեմիական բարեվարքության համար պատասխանատու է աշխատանքը ներկայացնող անձը:

1.6. Ուղեցույցը հիմնված է ԵՀՀ-ի վարքագծի կանոնների (R21), «Անձնական տվյալների պաշտպանության մասին» և «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքների, ESG 2015-ի, Եվրոպական հանձնաժողովի՝ ուսուցման և ուսումնառության մեջ ԱԲ-ի և տվյալների օգտագործման էթիկական ուղեցույցների (2022) և ԵՄ ԱԲ ակտի (2024/1689 կանոնակարգ) սկզբունքների վրա:

2. ԱԲ-Ի ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

2.1. ԱԲ գործիքները կարող են կիրառվել, եթե դասավանդողը, առաջադրանքի պայմանները կամ ԵՀՀ-ի կանոնները դա չեն արգելում, մասնավորապես.

- գաղափարների ձևավորման և թեմայի նախնական ուսումնասիրման համար
- տեքստի լեզվական խմբագրման, ուղղագրության և քերականության ստուգման համար
- ուսումնական նյութերի բացատրության, օրինակների ստեղծման և հասկացությունների պարզաբանման համար
- հետազոտական աշխատանքի նախնական փուլերում՝ հնարավոր ուղղություններ, հարցեր կամ հիմնաբառեր ձևակերպելու համար
- ծրագրավորման, տվյալների մշակման կամ այլ տեխնիկական խնդիրների լուծմանն օժանդակելու համար՝ համապատասխան ստուգմամբ
- ստեղծագործական կամ ուսումնական այլ նպատակներով, երբ ԱԲ-ի կիրառումը չի հակասում առաջադրանքի նպատակին:

1. GENERAL PROVISIONS

This guidance sets the principles and requirements for using artificial intelligence (AI) tools in teaching, learning, research, and administration at Yerevan Haybusak University (YHU). They apply to YHU students, teachers, researchers, and staff.

AI tools are software systems, platforms, and services that use AI technologies to search for and process information, analyse, create or transform content, translate, write code, and support other intellectual work.

YHU recognizes the potential of AI tools in education, research, and administration, and encourages their responsible and transparent use in line with academic integrity.

The use of AI tools must not replace the student's, teacher's, or researcher's own academic judgement, creative work, responsibility, or academic independence.

When AI is used, the person who submits the work is responsible for its final content, accuracy, appropriateness, and academic integrity.

The Rules are based on the YHU Code of Ethics (R21); the RA Laws on the Protection of Personal Data and on Copyright and Related Rights; ESG 2015; the European Commission's Ethical Guidelines on the Use of AI and Data in Teaching and Learning for Educators (2022); and the principles of the EU AI Act (Regulation 2024/1689).

2. PERMITTED USE OF AI

AI tools may be used unless the teacher, the assignment conditions, or YHU rules prohibit it, in particular:

- to generate ideas and explore a topic initially
- to edit language and check spelling and grammar
- to explain learning material, create examples, and clarify complex concepts
- in the early stages of research, to formulate possible directions, questions, or keywords
- to support programming, data processing, or other technical tasks, with appropriate checking
- for other creative or learning purposes, when AI use does not conflict with the purpose of the assignment.

2.2. ԱԲ կիրառումը չի ազատում օգտվողին տեղեկատվության ինքնուրույն ստուգումից և ներկայացվող աշխատանքի համար պատասխանատվությունից:

3. ԱԲ-Ի ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄԸ

3.1. Եթե ԱԲ-ը էականորեն օգտագործվել է ուսումնական, գիտական կամ այլ ակադեմիական աշխատանքի ստեղծման կամ մշակման ընթացքում, դրա կիրառումը հայտարարագրվում է դասընթացի, առաջադրանքի կամ ԵՀՀ-ի պահանջներին համապատասխան: ԱԲ-ն էականորեն է օգտագործվել, եթե դրա ներդրումն ազդել է աշխատանքի բովանդակության, արդյունքների կամ եզրակացությունների վրա:

3.2. Հայտարարագրումում, ըստ անհրաժեշտության, նշվում են.

- ԱԲ-ի օգտագործման նպատակը
- օգտագործված գործիքը
- դրա կիրառման հիմնական ձևը
- ԱԲ-ի միջոցով ստացված նյութի՝ մարդու կողմից ստուգման և վերամշակման փաստը:

3.3. ԱԲ-ի կիրառման հայտարարագրումը չի փոխարինում օգտագործված աղբյուրների պատշաճ հղմանը և մեջբերմանը:

4. ԱԲ-Ի ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

4.1. Ակադեմիական անբարեխղճություն է ԱԲ կիրառումը, երբ այն.

- ներկայացվում է որպես ուսանողի կամ հետազոտողի ամբողջությամբ ինքնուրույն աշխատանք, եթե առաջադրանքի պայմաններով ԱԲ-ի օգտագործումը չի թույլատրվում կամ պահանջվում է դրա բացահայտումը
- օգտագործվում է քննության, ստուգարքի կամ անհատական գնահատման ընթացքում՝ առանց դասավանդողի կամ քննության կանոններով նախատեսված թույլտվության
- օգտագործվում է մեկ այլ անձի մտքերը, ձևակերպումները կամ աշխատանքը որպես սեփականը ներկայացնելու համար
- օգտագործվում է ԱԲ-մբ ստեղծված կեղծ կամ չստուգված փաստեր, տվյալներ, աղբյուրներ կամ հղումներ ներկայացնելու համար
- օգտագործվում է գրագողությունը թաքցնելու կամ հայտնաբերումից խուսափելու նպատակով
- հանգեցնում է աշխատանքի այնպիսի փոխարինման, որի արդյունքում ուսանողը կամ հետազոտողը փաստացի չի կատարում պահանջվող մտավոր աշխատանքը
- օգտագործվում է ԵՀՀ-ի, դասընթացի կամ գնահատման կանոնները շրջանցելու նպատակով:

5. ԱԲ-Ի ՍՏԵՂԾԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

5.1. ԱԲ գործիքների տրամադրած տեղեկատվությունը կարող է պարունակել սխալներ, հորինված փաստեր, սխալ հղումներ կամ ոչ հավաստի եզրահանգումներ:

5.2. ԱԲ-ի միջոցով ստացված ցանկացած էական տեղեկատվություն ստուգվում է հուսալի և սկզբնական աղբյուրներով՝ նախքան ակադեմիական աշխատանքում օգտագործելը:

5.3. Ուսանողը կամ հետազոտողը պատասխանատու է իր աշխատանքում ներկայացված փաստերի, տվյալների, մեջբերումների և հղումների հավաստիության համար՝ անկախ այն բանից, թե դրանք ստացվել են ԱԲ գործիքից, թե այլ աղբյուրից:

6. ԱԲ, ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

6.1. ԱԲ գործիքները կիրառվում են հեղինակային իրավունքի, անձնական տվյալների պաշտպանության և ԵՀՀ-ի համապատասխան կանոնների պահպանմամբ:

6.2. Չի թույլատրվում ԱԲ գործիքներին փոխանցել սահմանափակ հասանելիության, գաղտնի կամ այլ անձանց պատկանող

Using AI does not release the user from verifying information independently or from responsibility for the work submitted.

3. DISCLOSURE OF AI USE

When AI has been used substantially in creating or developing academic work, its use must be disclosed in line with the course, assignment, or YHU requirements. AI use is substantial when it has affected the content, results, or conclusions of the work.

Where relevant, the disclosure states:

- the purpose of AI use
- the tool used
- how it was mainly used
- that a person checked and reworked the material produced with AI.

Disclosing AI use does not replace proper citation and referencing of the sources used.

4. PROHIBITED USE OF AI

Using AI is academic misconduct when it:

- is presented as entirely the student's or researcher's own work when the assignment does not permit AI use or requires disclosure
- is used in an examination, test, or individual assessment without the permission of the teacher or the examination rules
- is used to present another person's ideas, wording, or work as one's own
- is used to present false or unverified facts, data, sources, or references generated by AI
- is used to conceal plagiarism or avoid its detection
- replaces the work to such an extent that the student or researcher does not actually do the intellectual work the assignment requires
- is used to circumvent YHU, course, or assessment rules.

5. VERIFYING AI-GENERATED INFORMATION

Information produced by AI tools may contain errors, invented facts, wrong references, or unreliable conclusions.

Any substantive information obtained through AI must be checked against reliable, original sources before it is used in academic work.

Students and researchers are responsible for the accuracy of the facts, data, quotations, and references in their work, whether they came from an AI tool or another source.

6. AI, COPYRIGHT, AND DATA PROTECTION

AI tools must be used in compliance with copyright, personal data protection, and the relevant YHU rules.

Restricted, confidential, or protected information belonging to others must not be

պաշտպանված տեղեկատվություն՝ առանց համապատասխան թույլտվության:

6.3. Ուսանողների աշխատանքները, գնահատականները և այլ անձնական տվյալներ կարող են մուտքագրվել միայն ԵՀՀ-ի հաստատած և տվյալների պաշտպանությունն ապահովող ԱԲ գործիքներ կամ համապատասխան անձի համաձայնությամբ:

6.4. ԱԲ գործիքը չի կարող ճանաչվել գիտական աշխատանքի հեղինակ կամ համահեղինակ: Հրապարակումներում ԱԲ-ի կիրառումը հայտարարագրվում է նաև հրատարակչի պահանջներին համապատասխան:

7. ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Դասավանդողը յուրաքանչյուր առաջադրանքի համար սահմանում է ԱԲ-ի կիրառման՝ թույլատրելի, սահմանափակ կամ արգելված ձևը (Հավելված) և այն նախապես, դասընթացի ծրագրում կամ առաջադրանքում, հայտնում է ուսանողներին:

7.2. ԱԲ-ի օգտագործման կանոնները պետք է համաչափ լինեն առաջադրանքի կրթական նպատակին և չպետք է անորոշ ձևով սահմանափակեն թույլատրելի կրթական կիրառումները:

7.3. Խախտումը գնահատելիս հաշվի են առնվում դրա բնույթը, նպատակը, չափը, աշխատանքի վրա ազդեցությունը, ԱԲ-ի կիրառման բացահայտումը և այլ հանգամանքներ:

7.4. ԱԲ-ի հայտնաբերման գործիքների արդյունքները միայնակ բավարար ապացույց չեն խախտման համար: Որոշում կայացնելուց առաջ ուսանողին տրվում է իր դիրքորոշումը ներկայացնելու հնարավորություն:

7.5. Գնահատականի վերաբերյալ որոշումը կայացնում է դասավանդողը: ԱԲ-ն կարող է օժանդակել, սակայն չի կարող լինել գնահատման միակ հիմքը:

7.6. ԱԲ-ի ոչ պատշաճ կիրառման համար պատասխանատվությունը սահմանվում է ԵՀՀ-ի վարքագծի կանոններին (R21) և ակադեմիական բարեվարքության վերաբերյալ ԵՀՀ-ի կանոններին համապատասխան:

8. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ

8.1. ԵՀՀ-ն ուսանողների և աշխատակիցների համար կազմակերպում է ԱԲ-ի գրագիտության վերապատրաստումներ՝ ներառյալ գործիքների սահմանափակումները, ռիսկերը և պատասխանատու կիրառումը:

8.2. Երբ առաջադրանքը պահանջում է ԱԲ-ի կիրառում, ԵՀՀ-ն ապահովում է անվճար կամ ինստիտուցիոնալ տրամադրվող գործիքի հասանելիություն, որպեսզի ոչ մի ուսանող չհայտնվի անհավասար վիճակում:

8.3. ԱԲ տեխնոլոգիաների արագ զարգացմամբ պայմանավորված՝ կանոնները վերանայվում են առնվազն տարին մեկ անգամ:

entered into AI tools without the appropriate permission.

Students' work, grades, and other personal data may be entered into AI tools only if YHU approves them and they protect the data, or with the consent of the person concerned.

An AI tool cannot be credited as an author or co-author of academic work. In publications, AI use is also disclosed in line with the publisher's requirements.

7. ASSESSMENT AND RESPONSIBILITY

For each assignment, the teacher sets whether AI use is permitted, limited, or prohibited (Annex) and informs students in advance, in the course syllabus or the assignment brief.

Rules on AI use must be proportionate to the assignment's educational purpose and must not restrict legitimate educational use in vague terms (ESG 1.3).

When assessing a breach, the teacher considers its nature, purpose, extent, effect on the work, whether the student disclosed AI use, and other circumstances.

AI-detection tools alone are not sufficient evidence of a breach. Before deciding, the student can state their position.

The teacher decides on the grade. AI may assist but cannot be the sole basis of assessment.

Responsibility for improper AI use is determined under the YHU Code of Ethics (R21) and YHU rules on academic integrity.

8. SUPPORT AND REVIEW

YHU provides AI literacy training for students and staff, covering the tools' limitations, risks, and responsible use.

When an assignment requires AI use, YHU ensures access to a free or institutionally provided tool, so that no student is disadvantaged.

Because AI technologies change rapidly, YHU reviews these Rules at least once a year.

ՀԱՎԵԼՎԱԾ. ԱԲ-ի կիրառման կանոնի օրինակելի ձևակերպում ● ANNEX. Model AI-use statement for assignments

Դասավանդողը կարող է այս ձևակերպումը ներառել առաջադրանքի սկզբում:
Teachers may place this statement at the start of an assignment.

Այս առաջադրանքի կատարման ընթացքում ԱԲ գործիքների կիրառումը՝ ● *In this assignment, the use of AI tools is:*

☐ թույլատրվում է ☐ թույլատրվում է սահմանափակ ձևով (նշել՝ ինչպես) _____ ☐ չի թույլատրվում

☐ *permitted* ☐ *permitted in a limited way (state how)* _____ ☐ *not permitted*

Թույլատրելի կիրառման դեպքում ուսանողը պատասխանատու է ԱԲ-ի միջոցով ստացված տեղեկատվության ստուգման, աշխատանքի ինքնուրույնության և օգտագործված աղբյուրների պատշաճ հղման համար, և հայտարարագրում է ԱԲ-ի էական կիրառումը:
Where AI use is permitted, the student is responsible for checking information obtained through AI, ensuring independent work, citing sources properly, and disclosing AI use.

Այս տարբերակը (բնօրինակ)	**This version (original)**	G45_YHU-AI.pdf
Ընդունվել է	**Adopted**	11.09.2026
Հասցե	**URL**	https://haybusak.am/dx/g/G45_YHU-AI.pdf
Հաջորդ վերանայումը	**Next planned revision**	2027 թ. սեպտեմբեր ● September 2027